

## Դ Է Պ Ի Ա Ն Ի

Լուսաբացին անձկանօք էի սպասում, որ աւերակներին վերստին այց ելնեմ: Եւ եկաւ այդ լուսաբացը. աշնանային մի սիրուն առաւօտ արար-աշխարհի հետ շողազարդեց նաև աւերակունքն: Երկնքում ոչ մի ամպ. լեռնակատարները ասես մի առանձին հաճոյքով պայծառ ճակատները բացել են արևի առաջ և ժպտում են վեհօրէն: Ախուրեանի Թիկունքից բարձրացող բարակ շամանդաղը արևի առաջին ցոլքերի տակ ցրիւ եկաւ և մոայլ ձորը իր նօթոտ ժայռերի տակ նոյնպէս մի փոքր փայլ առաւ: Այս ու այն տեղ թռչուններ էլ երևացին: Մայր եկեղեցու կտրի վրայից հնչուեց նաև աղանձներէ կըղ-ղոց: Լուռ և մշտապէս հեացող խէզներ կան, աւերակների սիրահար զեռուններ, որոնք իրանց խոռոչներից տափակ, նողկալի գլուխները հանած՝ արևի առաջին շողերի տակ աշխատում են տաքացնել իրանց միշտ սառն մաշկը: Ծաղկածորում հընչուեց մի հովուի ճիչը. այնտեղ ոչխարներ կան, որոնք արածում են քարերի տակ, ջրերի ափին, փոսերում մոռացուած վտիտ խոտերը: Իմ գլխի վրայից անցաւ կռունկների մի երամ և նրանց մեկամաղձիկ երգը հնչուեց աւերակներից բարձր, և ապա հեռանալով մեղմիւ մարեց օդեղէն բարձունքում, որպէս լալկան քնարի վերջին հեծկտանքներ: Ահա բոլորը, Անին համարեա լուռ է նաև ցերեկով:

Եւ ես քայլում եմ այն վայրերով, ուր դարերի ընթացքում այնքան սերունդներ տքնել են, չարչարուել, յուսացել ու երազել, ուրախացել են ու լացել, ապա անցնելով Թաղուել են մութ անյայտի ծոցում: Եւ այս քարերը այլանդակօրէն փշուր-փշուր՝ ինչպէս մի խօլ մրրկի ժամանակ հսկայ ձեռներով իրար զարկուած՝ Թափուել են վրայ կոյտ-կոյտ, անձև, վնասեցուցիչ, վիրաւորական: Որքան աշխատանք և ռքքան խանդ, ռքքան յոյսեր և երազներ փշրուած նրանց հետ: Կարծես քարեր



չեն առաջդ, այլ կոխկըրտուած, անողորմ կերպով խեղաթիւրուած կեանքեր, որոնք դեռ երէկ ապրում էին խանդավառ ու յուսալից:

Առանց որոշ նպատակի, մուրառ ու յուսաբեկ քայլում ետ անվերջ, խորդ ու բորդ թումբերի վրայից, դարիվեր, դարիվար, և ամեն տեղ քարեր ու քարեր: Մի անիծուած ձեռք կամեցել է, որ սրանք անվերջ լինին, այս յղկուած, քանդակուած, դրուագագարդ քարերը, որոնցից իւրաքանչիւրի վրայ գործել է մի հովուտ ձեռք, իւրաքանչիւր դարդի վրայ կուացել է մի գլուխ, խոհուն, երազուն և սքանչելի:

Հայկական արուեստի, ճարտարութեան, փայլուն քաղաքակրթութեան մի հսկայական դամբարան—ահա թէ թիւն է նըշանակում Անի: Այստեղ հազար ձեռներով սպանուած է մեր ցեղական սքանչելի հանճարը և հազար—հազար կտորներով փշուռուած է անձրենների և հողմերի տակ: Արեւելքի և արեւմուտքի դարաւոր ու արիւնոտ պայքարի պատմութիւնն է գրած այս աւերակների վէրքերի վրայ, այս փշուր—փշուր քարակոյտերի տակ: Այստեղ հրէշաւոր սպանուալի կերպով դէպի երկինք ցցուած պարիսպների, խորտակուած գմբէթների ու աշտարակների, այս գաղտնախորհուրդ բլուրների ստորերկրեայ շէնքերի մէջ, քարերի այս ծովում խողխողուած է արեւմտեան մտքի, ստեղծագործող սքանչելի իդէայի յառաջապահը, ինքը հայ ժողովուրդը: Համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան մէջ, աւերուած Անին՝ սև ոճիրն է, բարբարոսութեան զարհուրելի յաղթանակը, վերագարձը՝ դէպի արիւնի և սոսկումի դարերը, երբ միտքը երկնում էր բարին ու գեղեցիկը լուռ ոչնչութեան համար:

Սալամինում և Մարաթոնում սկսուած արեւելքի և արեւմուտքի վիթխարի պայքարը Հռոմի լէգէոնների շնորհիւ անցաւ Հելենսպոնտոսը և հազար տարիներ շարուակ նրա աւերիչ կրակը մըլխաց հայկական բարձունքներում, և լափեց, մաշեց մեր բոլոր ոյժերը, մեր եռանդը, մեր կեանքը: Դեռ երբէք մի պայքար աւելի երկարատեւ, աւելի խոշոր ու կատաղի չեղաւ, քան ասիական ուռնացող խուժանների կռիւն արեւմուտքի քաղաքակրթութեան դէմ. և, Յունաստանից մինչև Հնդկաստան, ո՛չ մի տեղ նրա յեղեղումները աւելի աւերիչ, աւելի արիւնոտ չեղան, քան Հայաստանում, յատկապէս Անիում: Սա աւերած է, այլ ոչնչութիւն, իսպառապուռ ջնջումն: Կարծես այս շքեղ քաղաքի ճոխութիւնն ու գեղեցկութիւնը վիրաւորել է անապատների ամայութեանն ու խստութեանը սովոր բերաւ հոգիներին, որոնք խորշակներով թափ առած՝ կատաղօրէն փշրել են, ո՛չ, ատամ-



ներով կրծել են այս բարերը և ընկել, ոչնչացել նրանց հետ։ Ամեն մի քար, ամեն մի պատ ու շէնք դեռ կրում է իր վրայ բիրտ, բարբարոս ասիացիների, արիւնոտ թաթարների հարուածների հետքերը։ քաղաքակրթութիւնը, գեղեցկութիւնը, արուեստը, սպանուած են, բայց վայրենութիւնը դեռ ապրում է։ Անին տեսնելուց յետոյ հասկանալի է դառնում, թէ ի՞նչու արեւելքի այնքան հինաւուրց, խոշոր քաղաքներից լոկ անուաներ ու յիշողութիւններ են մնացել։

Արեւելքն իր զաւակները լափող Կոնստան է։ Դեռ այսօր էլ Փոքր Ասիայում նա կանգնած է սպառնալի, արիւնոտ, և հայկական բարձունքների վրայ նրա ճիրանների մէջ թրպլըտում է հինաւուրց կուլտուրական ազգը, անկարող կատարելու իր քաղաքակրթական միսիան, որի համար տառապանքը իր պատմական ճակատագիրն եղաւ։

Ահա թէ ի՞նչու աւերուած Անին և՛ հին է և՛ նոր. նա նոյնքան անցեալ է, որքան և այժմէութիւն։ Մեր չտեսնուած էպոպէայի մի արիւնոտ էջն է նա։

Ծանր, խեղդող խոհեր, երբ կը թողնէք մեզ. բայց ճշող կոշմարը վախճան չունի, սև մտքերը թունաւոր բզէզների պէս պաշարում են այցելուի գլուխը և նրա հետ գնում անվերջ։

Քայլում եմ առաջ, միշտ առաջ։

Եւ այս շէնքերը... պալատներ, աշտարակներ, մատուռներ, եկեղեցիներ, պարիսպներ ցաւագնօրէն հոյակապ՝ իրանց խեղաթիւրումների մէջ, արտասուելի ու գեղեցիկ՝ իրանց մշտական աւերածով՝ յաւիտենապէս բողոքող մի բան ունեն իրանց խրոխտ կերուածքի մէջ և վերջնական անկումից առաջ սպառնալիք են ուղղում նրանց թշնամիներին։ Եւ թշնամիները չկան, այն բիրտ, անասնական գլուխները, որոնք երբէք դէպի վեր չնայեցին, վսեմն ու սքանչելին ըմբռնելու անկարող եղան։ Դարեր շարունակ նրանք կրծել են ճարտարապետութեան այս հրաշալիքների հիմքերը, փշրել են և աւերել՝ ինչով կարողացել են և սակայն այս շէնքերը իրանց վիրաւոր հիմքերով, տապալուած կատարներով դարձեալ չեն փչում. կանգնած են դեռ՝ իրանց նազելի իրանով յենուած մի հատ սիւնի, մի բարի, աւեր կամարի, մի փոքր շաղախի վրայ, կանգնած են հեղնելով ժամանակը ու չարագործ ձեռները։ Գետնից համարեա կտրուած՝ հիմքերի քարերը, ցաք ու ցրիւ, պատուանդանները փշուր-փշուր իրանց ոտքերի տակ, նրանք ամենքն էլ, ասես նզովելով աշխարհը, փորձում են թափ առնել և տարուել դէպի անհունը։ Վեհ ու ցաւոտ մի բան կայ այս փոքրիկ փնջած և կեղեցիների լուռութեան մէջ, որոնք համարեա կախուած են օդի



մէջ, դժգոհելով մայր երկրից, ուր գեղեցիկը դժբաղդ է, բարին՝ անարգուած, միտքը՝ սպանուած, ազատութիւնն ու խիղճը՝ տրոհուած, ուր դարերը՝ արիւնի և ոճրի հարուստ աւարով ծանրաբեռնուած՝ անվերջ շրջաններ են կատարում միեւնոյն տեղում: Եւ դարերի յետեից մարդը՝ այս յաւիտեանական գոհն ու դահիճը, սողում է իր հոգու աւերակների վրայ, սողում է, լալիս, կրճոտում, քրքրում սեփական միտքը, առանց ազատուելու իր գլխին ծանրացող չարիքից:

Քայլում եմ առաջ և ինձ հետ է քամին... աւերակների մշտական քամին, որ հեծեծում է անվերջ, և չգիտես ինչո՞ւ է ամեն տեղ: Նա որ խօսեցնիլ գիտէ երկնքից կախուած այս շէնքերը, նա է որ ուշ գիշերին, լռութեան ու խաւարի մէջ բաց է անում այս քարերի լեզուն և նրանց հետ միասին կարծես շշնջում է մի հատիկ բառ՝ «անէծք...»

Աւերածն այստեղ այնքան զարհուրելի է, այնպէս համատարած՝ որ երբ մարդ կանգուն է տեսնում մի շէնք, մի կամար, մի սիւն, զարմանում է և գուցէ չվշտանայ, եթէ նա էլ հէնց իր աչքի առաջ ընկնի ու խորտակուի միւսների պէս: Հոգիների ներդաշնակութեան պահանջը առեղծուածային է. անդամ աւերածի մէջ նա փնդում է կատարելութիւն: Երբ մահը համատարած է, լինչ արժեն մի քանի կեանքերը, երբ անտառը արմատախիլ ջնջուած է փոթորկով, երկու ճղակտոր ծառերի տեսքը դառնում է վրդովեցուցիչ: Ուզում ես, որ գերեզմանը կատարեալ լինի, ոչնչութեան և սարսափի իր բոլոր թափով իշխի:

Ինչպէս որ ճակատամարտի դաշտում փուռած դիակների տակ ծածկուած են լինում կիսակենդան, տնքացող վիրաւորներ, ճիշտ այնպէս Անիի այս արտաքին աւերածի, այս փշրուած քարերի, հիմն ի վեր տապալուած շինութիւնների տակ կան տակաւին կիսաւեր, կամ գուցէ բոլորովին կանգուն շէնքեր: Ստորերկրեայ Անին է այնտեղ ծածկուած, նա է, որ այնպէս խուլ դնդին է բարձրացնում, այցելուի ոտների տակ: Խաւարի աշխարհն է այն, որ դարերից ի վեր գրաւել են մողեսները, օձերը, խլէզները, հազար ու մի դժնետեսիլ սողունները: Նրանք երբեմն դուրս են սողում այնտեղից, իրանց հեզնոդ համրութեամբ դայրացնում հետաքրքիր այցելուին, ապա շտապով ծածկւում, կարծես ցոյց տալու համար, թէ իրանց յետեից ոչ ոք սիրտ չի անի իջնել, թէ այնտեղ՝ ներքեւում, իրանք միահեծան տէր են:

Փոքրիկ, կանաչաւուն բազմաթիւ թմբեր կան, մոռացուած, մաշուած գերեզմանների նման: Զգոյշ քայլիւ նրանց



վրայով, նայիր ոտքիդ առաջը, տեղ-տեղ հերդիկներ կան բացուած, ուր կարելի է ներս գլորուել: Նայում ես այդ անցքերից. հողի փուլածքն է փակում հայեացքդ, կամ խաւարը: Այն տեղ է միւս Անին, և դու պեմնել չես կարողանում: Յուսահատ ու զայրացած ոտքով դուրս ես գետինը, որ վերստին դնում է ցաւով, ու դու առաջ ես անցնում դէպի նոր յուսախաբութիւններ, նոր կսկիծներ:

Ահա և մի բաղանիք, բազմանկիւնի, կամարակապ, ցածրիկ մի շինութիւն: Աւազանները չկան, բայց մնում են դեռ ջրատար անցքերը, պատերի միջից, ցածրիկ դռները, բաժանմունքները: Անարուեստ շէնք է, բայց և այնպէս ուշադրաւ: Մասնաւոր էր արդեօք սա, մի խշիւնի սեփականութիւն, թէ հասարակական. իշխանական պալատներին կից անշուշտ կային ուրիշները. ինչպէս էին կազմուած նրանք, և ինչո՞ւ հետքն անգամ չկայ, ո՞վ կարող է ասել:

Ահա բազմաթիւ ձիթահանքեր. պատերից միայն հիմքերն են մնացել և նրանց վրայ է ընկած դեռ կոլոր ահագին ձիթահան քարը: Հին աշխարհին լոյս մատակարարող գործարաններն են սրանք. տաճարներ ու մասնաւոր տներ այստեղից էին ստանում իրանց կանթեղների ձէթը: Ինչո՞վ էին լուսաւորում պալատները, ի՞նչ ձև ունէին ջահերը, ճրագները, կանթեղները, դարձեալ չգիտենք:

Դարձեալ աւերակներ, դարձեալ հիմքեր, պատեր, կամարների մնացորդներ, որոնք եկեղեցիներ չեն, և ոչ էլ մասնաւոր բնակարաններ, և որոնց բոլորին էլ մեր ժողովրդական փութկոտ, միամիտ, երբեմն համարձակ հաստէրները մի մի անուն են դրել: Իրանց կամքն է. հաստէրը եթէ բանաստեղծ չէ, բայց դարձեալ երեւակայութիւն ունի ստեղծագործութեան հետամուտ է, որ սիրում է պարզութիւն, գաղտնիքից խորշում է: Այնուամենայնիւ Անին շարունակում է մնալ մի համր վհուկ, որ եռանդով թագնւում է մեր աչքերից: Եկեղեցիներից դուրս, որոնց անունները յայտնի են, արձանագրութիւններից մնացած շէնքերի ինչ լինելը այնքան անորոշ է, որ նրանց մասին խօսելիս՝ «գիտակ» անձինք ստիպուած են միշտ սկսել «ասում են» բառից:

Ասում են... և ճշմարտութիւնը դեռ ոչ ոք չառաց: Վերև յիշածս բաղանիքն ու ձիթահանքերը դարձեալ «ասում են». ոչ աւանդութիւն կայ, ոչ պատմութիւն և ոչ էլ գիտութիւն: Մընում է խղճալի «ասում են»-ը, որի հիմունքը սովորաբար մի մարդի բերնից դուրս փախած միամիտ կարծիքն է:

Այդքանը չափազանց քիչ է!



Դուրս ես գալիս մի շէնքից և դարձեալ քայլում ես վեր՝ վար, վեր՝ վար, մեռած քաղաքի բեկորների, փշրուած քարերի այս ժխտ-  
րի միջից: Այնքան էլ հեշտ չէ. ոտքդ դիպչում է այս ու այն կոյ-  
տին, իջնում ես այս կամ այն փոսը, կրկին բարձրանում, դարձեալ  
իջնում: Եւ հոգիդ յոգնում է անորոշութեան, անայտութեան մի  
ծանր բեռի տակ, որ Մեծ Լուսթիւնը դնում է կրծքիդ, ինչպէս  
կապարի մի անագին զանգուած: Ձգիտես ինչի՞ վրայ ես քայ-  
լում, ի՞նչ են կոխոտում ոտներդ, ոսկորներդ ես տրորում, թէ  
արիւն ու արցունք, գերեզման, բնակութիւն, թէ աննշան բը-  
լուր: Ո՞վ է ապրել այս ստորերկրեայ շէնքերում, քեզանից ա-  
ռաջ. ո՞վ է շնչել այս օդը, կոխել այս հողը, աղօթել այն տա-  
ճարներում, ի՞նչ է երազել, ի՞նչ է երգել, ի՞նչ անիծել կամ պաշ-  
տել: Կ'ուզէիր այդ բոլորն իմանալ, որովհետեւ ո՞վ և լինի նա,  
քո նախահայրն է, նրա արիւնը երակներիդ և երազները հո-  
գուդ մէջ ես կրում, նրա պէս ես լալիս, նրա պէս ծիծաղում ու  
աղօթում: Եւ հոգիդ այրում է հետաքրքրութիւնից, կ'ուզէիր  
իմանալ այդ բոլորը, և սակայն հնար չկայ, մութ անայտը հսկա-  
յական վիռլէի պէս թուխս է նստել գաղտնիքների վրայ, պահում  
է այդ անցած-գնացած աշխարհը իր սև թևերի տակ, պահում է մի  
յամառ, յուսահատեցուցիչ նախանձախնդրութեամբ:

Եւ ցաւի ու զայրոյթի մի խորին զգացմունք պաշարում  
է հոգիդ, ուռցնում է կուրծքդ այս անողորմ ու խեղդող անայտ-  
ութեան դարերի այս խաւարի առաջ, որ ծածկում է քեզանից  
հայրերիդ կեանքը, թագցնում է այնքան նուիրական ու թան-  
կագին ճշմարտութիւններ: Քիչ է մնում խելագարօրէն տարուես  
այս ցից-ցից քարակոյտերի միջով, ընկնես, արիւնոտես ձեռք  
ու ոտքդ, վեր կենաս, դարձեալ վազես մի շէնքից միւսը, մի  
թմբից, մի պատից միւսը, և շարունակ ճչաս սրտապատառ.  
«Սօսեցէք, խօսեցէք, էյ համր ու անողորմ քարեր. նղճվք ձեզ,  
եթէ դուք լուէք. խօսեցէք... դարհուրելի է ձեր լուսթիւնը...»

Բայց վաղիր, փշրիր ձեռքդ ու ոտքդ, որքան կ'ուզես,  
ճչա, քանի ձայն ունիս, բեզ պատասխանողը դարձեալ այս  
լալկան քամին է: Քարերը լուռ են, և շէնքերը՝ համր ու վի-  
րաւոր, շարունակում են թափ առնել դէպի երկինք փախչելու  
համար բեզից, աշխարհից, ամենքից:

Եւ պատասխան չկայ. ճշմարտութեան ծարաւ հոգին մնում  
է պառկալուած: Ո՞վ վերջապէս խօսք կը տայ այս համր  
սփինքսին, ո՞վ դուրս կը քաշի դամբարանից մեր Անին, մեր  
երեկուայ անցեալը, մեր փառքը, նա՛ որ չի թողնում մեզ՝ ճա-  
կատներս կախել օտարի առաջ, որ ազատում է մեզ արհամար-  
հանքից և հնար է տալիս վերաւորանքի հանդէպ խրոխտալ:



Նա այստեղ է, այս աւերակների մէջ, այս քարակոյտերի ու թմբերի տակ: Միթէ չպէտք է մի օր նա լոյս աշխարհ գայ: Թող նա թաղուած լինի, թող մահուան դեղնութեամբ ծածկուած լինի նրա գեղանի դէմքը, գլխին մոխիր ցանուած և բազումները անողորմ կերպով փշրուած, նա այնուամենայնիւ այնպէս հարուստ է հմայքով, փայլով, գեղեցկութեան այնքան գանձեր ունի իր հետ թաղցրած: Յետ քաշէք գերեզմանի դեղին հողը, և թողէք մենք տեսնենք, թող աշխարհ տեսնի, չէ որ նա իր հետ բերելու է մեր հողին, մեր ցեղական հանճարը, ստեղծագործող կարողութեան գաղտնիքը: Նա իր հետ կը բերի պատմական ճշմարտութեան անզուգական լոյսը. մեռանք խաւարի, անյայտութեան մէջ խարխափելով: Ոչ մենք ենք մեզ ճանաչում, ոչ օտարը: Մեր ամբողջ կեանքը նրա մոխիրների տակն է: Անողորմ գիտութիւն, յետ տուր մեզ մեր Անին:

Յունաստանը, Իտալիան աւերակների միջից գուրս սողացին, փողոտ, վիրաւոր ձեռներով, մազերը մոխրապատ ու խռիւ, դէմքերը դունատ ու վտիտ, ծնկների վրայ դողդողալով բարձրացան իրանց գերեզմաններից և աշխարհը ժպտաց նւրանց, աշխարհը սքանչացաւ: Դարերի մառախուղի միջից նւրանք իրանց հետ բերում էին վերածնութեան սքանչելի աստղը, և կարողացան համարձակութեամբ կարկառու բազումները, արևի տակ անկիւն խնդրել:

Լուռ կաց, լուռ, խեղճ, երազող անցուորական, յափշտակութեան փայլփլուն թևերի վրայ գուր ես տարւում դէպի Միջերկրականը, ուր հին աշխարհի երկու գեղանի քոյրերը՝ Յունաստան և Իտալիա, վաղուց են մոռացել իրանց վէրքերի մորմոքը և իրանք եռանդով հանում են հողերի տակից իրանց փառքն ու գանձերը: Անիումն ես դու, արևելքի սև երկնքի տակ, ուր մահն արագ է ու ահաւոր, իսկ վերածնութիւնը չափազանց դանդաղ:

Նւ հով պէտք է խաւարի միջից գուրս հանի Անին. թիւրքըն ու քիւրդը, դժբախտաբար նաև հայերը՝ փշրել, կողոպտել ու տարել են սրա զարդերը, ժամանակը կրծել է քարերը, իսկ մեր ողորմելի սերունդը շարունակում է նոյն վանդալութեան ու սրբապղծութեան գործը նոյն եղանակով: Նա գալիս է այստեղ, անհամ, ճոճաւան, ձանձրալի բառերը փռում մի համբերատար մատենանի թերթերի վրայ, որ վարդապետը սիրով դնում է այցելուի տրամադրութեան տակ, և ապա գուրս է գալիս իր խղճուկ տխրութիւնը ման ածում աւերակների մէջ, քարերի վրայ գրոտելով իր ոչինչ անունը: Դեղարուեստ, միտք, պատմութիւն, ամբողջ քաղաքակրթութիւնը, սպանուած այստեղ և նւր-



րանց նուիրական գերեզմանի վրայ մենք տեսնում ենք միայն զանազան թշուառ ոչնչութիւնների անուաներ: Մնամէջ, անփայլ գոյութիւնների անմահանալու տենչը աւելի ողորմելի, աւելի դատարկ արտայայտութիւն չէր կարող ունենալ, քան այս: Մարդիկ նեղութիւն են կրել, եկել են այստեղ, տխրել են, մահ եկել, և կ'ուզէին, որ յաջորդ այցելուները, ինչ եմ ասում, յաջորդ սերունդներն անգամ իմանան նրանց կեանքի այդ միակ սխրագործութիւնը: Անիի քարերը յարմարագոյն յուշարձաններն են, համր, համբերող, անտէր և յըդկուած. գրիւր որչափ ուզում ես, ինչ ուզում ես: Եւ անմահութեան այս հսկայ դամբարանի վրայ փորձել են անմահանալ այնքան ոչնչութիւններ...

Ո՞ւր ասես չեն գրուած անուններ. ռը պատը, ռը քարը, ռը յիշատակարանը իր վրայ չի կրում մի քանի տասնեակ անուններ: Քիւրդը, թիւրքը չանգոնելով բարձրացել են վեր մի սիրուն զարդ, մի քար պոկելու համար. հայը եկել է նոյն տեղերում իր անունը գրելու: Ես տեսել եմ ուրիշ երկրների աւերակների վրայ էլ անուններ, այս ողորմելի ունայն անմահութեան հետամուտ ամբոխներ և ամբոխամիտներ, բայց հայը գրանց բոլորին գերազանցել է: Այստեղ հայ ամբոխը կանխամտածուած կերպով բերել է իր հետ զանազան գոյնի ներկեր և նրանցով գրել իր անունը, որ իր անհամ յիշատակը անջնջելի մնայ: Նոյնիսկ Մայր եկեղեցու, ինչպէս Ս. Լուսաւորչի եկեղեցու սեղանները, խաչկալները, պատկերներն անգամ ծածկուած են զանազան անուններով:

Ո՞ւն այդ անունները... Նրանք ամեն տեղ են, նրանք անտանելի են. արտասուելի՜ միևնոյն ժամանակ վհատեցուցիչ է մեծագործ հայրերի թողած այս սքանչելիքների վրայ տեսնել՝ նրանց խեղճ որդիների չնչին անունները:

Ա. Ահարոնեան

(Կը շարունակուի)